ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ԹԱՆԶԻՄԱԹԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ
(1840-1850-ական թվականներ)

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Թանզիմաթի ժամանակաշրջանի բարեփոխումներն իրենց ազդեցությունը թողեցին նաև Զմյուռնիայի հայ համայնքի տնտեսական ու մշակութային կյանքի վրա: Զմյուռնիայի և դրա շրջակայքի հայ բնակչության համար դրական նշանակություն ունեցան Գյուլհանե-ի հաթթով հռչակված կայորության հոլատակների կյանքի, դույքի և պատվի ապահովության երաշխիքները, նրանց իրավահավասարությունը օրենքի առջև: Կարևոր էր, որ սահմանվում էին հարկերի և տուրքերի կայուն տեսակներ, կարգավորվում էին դրանց գանձման ձևերը: Մի հայտնի չափով տեղական վաճառականությունը շահեց առևտրական արտոնությունների համակարգի (իմթիյազ) վերացումից. 1840-ական թվականներին հաստատվեց միատեսակ մաքս նավահանգիստներ մտնող բոլոր նավերի համար, դրա հիմքում ընկած էր սրանց ջրատարողության չափը[1]: 1851 թ. Զմյուռնիայում սկսեց գործել առևտրական դատարանը (թիջարեթ մեջլիս-ի), որը կարգավորում էր առևտրական բնույթի վեճերը, ինչպես նաև քրեական դատարանը (ջյունհա մեջլիս-ի): Այս դատարաններում կարևոր նորույթը մահմեդականների և ոչ մահմեդականների վկայությունների իրավահավասարության ճանաչումն էր: Թանզիմաթի հրապարակումից ի վեր այսպիսի դատարաններ կային միայն Կ. Պոլսում: Քրեական դատարաններում քրիստոնյաները անհամեմատ փոքր ներկայացուցչություն ունեին, բայց դրա պոյությունն իսկ նկատելի քայլ էր նախկին շարիաթական դատարանների համեմատությամբ[2]:

Հայտնի է, որ XVIII դ. Օսմանյան կայսրության մեջ զորեղացան և դրեթե ինքնադլուխ դարձան այանները, Զմյուռնիայի շրջանում՝ կարաօսմանօղլուները: Վերահսկելով շատ թիմարների և զիամեթների հարկերը, հանդես գալով որպես մուքաթաների հարկահավաք, կարաօսմանօղլուները իրենց հսկողության տակ առան նաև տեղական բամբակի մշակությունը և բամբակի դործվածքների առևտուրը: Նույնպիսի շահեկան վիճակում էր նաև Մանիսայի տոհմական մյութեսելիմը[3]: Սոցիալական այս շերտն էր, որ XVIII–XIX դդ. սահմանագծին թուլանալով և վերստին դլուխ բարձրացնելով, դեմ դուրս եկավ թանզիմաթի բարեփոխումներին, որոնք սպառնում էին նրանց տնտեսական ու վարչական հզորությանը: Թանզիմաթի ձա-

---

1 «Արշալույս արարատյան», 1846, № 258:

2 Նույն տեղում, 1851, № 381:

3 М. С. М е й е р. Османская империя в XVIII веке. М., 1991, с. 167–168.

խուծուռ մեկնաբանություններով հանդես եկան Դենիզլիի, Ագհիսարի, Աքշեհիրի հին կառավարիչները, որոնք մահմեդական բնակչությանը գրգռում էին «գյավուրների» դեմ և թանզիմաթը ներկայացնում որպես նրանց հեղինակած կամ առնվազն նրանց օգտին հռչակված ակտ: Դենիզլիում հին աղաները 1841 թ. պայքար էին սկսել հաթթը շերիֆի բարեկարգումների դեմ: Քաղաքի նախկին կառավարիչը (մյուսելլիմ) նոր նշանակված և իրեն փոխարինած նոր պաշտոնյայի, ինչպես և նորանշանակ շուրայի մեջլիսի անդամների դեմ բանսարկություններ էր սարքում և ժողովրդին դրգռում նրանց դեմ: Բանը հասավ այնտեղ, որ խաբված ամբոխը հարձակվեց նոր իշխանավորների վրա՝ ծեծուջարդի ենթարկելով նրանց: Շուրայի դանձապետ հայազգի Հակոբը հազիվհազ փրկվեց սպանվելուց[4]: Նույն կերպ, Աքշեհիրի կառավարիչ Աբդիլ բեյը մահացու ծեծ էր տվել տեղի հայ հոդաբարձուներին միայն այն բանի համար, որ նրանք բողոքել էին թանզիմաթով վերացված հարկերը կրկին հավաքելու վերաբերյալ կառավարչի և շուրայի որոշման դեմ[5]: Թանզիմաթի հռչակումից տարիներ անց, Զմյուռնիայի շրջակայքի բնակավայրերում ոչ մահմեդականները դարձյալ տառապում էին նոր, կարծեցյալ «բարեկարգված» իշխանությունների կեղեքիչ գործողություններից: 1846 թ. սրանք Աքշեհիրի հայերին պարտադրում էին օթևան տալ այլևայլ պաշտոնյաների, զինվորների ջոկատների և այլն, տանտերերին հարկադրելով հոդալ նրանց պարենի և առհասարակ ապրուստի խնդիրը՝ ապաստան տվողներին ակնհայտ վնաս հասցնելու դիտավորությամբ[6]: Բարեկարգումները պահպանողականության շրջանում հանդիպեցին առավել ծայրահեղության հասցնող գործողությունների. Զմյուռնիայի շրջակայքում, ինչպես և Ադրիանուպոլսում, Կոնիայում, Կեսարիայում և այլուր ֆանաթիկոսները կազմակերպեցին քրիստոնյաների ջարդերը և նման միջադեպերը կրկնվեցին կայսրության մեջ՝ 1856 թ. հաթթը հյումանից հետո Բալկաններում, Սիրիայում և այլուր[7]: Դեռևս 1851 թ. հաթթ-ի շերիֆի բարեկարգումների շրջանում Զմյուռնիայի «Արշալույս արարատյան» թերթը Բուլղարիայում և Բոսնիայում թանզիմաթի դեմ մահմեդական բնակչության հուզումները բացատրում էր իր «միլեթի» իրավիճակից թելադրվող հայեցակետից. «Այս խռովահույզ անձանց նպատակը, բավականապես հայտնի է ամենուն, որ վաղեմի ապօրինավոր արտոնությունները կուզեն պաշտպանել, զորոնք նոր բարեկարգությունները (թանզիմաթ-ի խայրիյե) բոլորովին ջնջեց»[8]: Հին այանների մի մասը, սակայն, կարողացավ հարմարվել բարեկարգումներին՝ պահպանելով երբեմնի դիրքերը: 1843 թ. Մանիսայում իշխող տոհմական աղաներից քաղաքի կառավարիչն էր Կարաօսման զադե Էյուբը, որն իր աեղը, թեկուզ անունները փոխելու դնով, զիջել էր որդուն՝ Ադրք բեյին: Վերջինս, ինչպես իր հայրը, շարունակում էր վերահսկել դատա-

---

4 «Արշալույս արարատյան», 1841, № 16·

5 Նույն տեղում, 1846, № 268:

6 Նույն տեղում:

7.И. Л. Ф а д е е в а. Официальные доктрины в идеологии и политике Османской империи. М., 1985, с. 75.

8 «Արշալույս արարատյան», 1851, № 387:

բաններն ու տուրքերը, պարենի դները և կշեռքների ստուգությունը չուկայում (վերահսկելով ապրանքների իրացումը) և ճկունություն ցուցաբերելով նոր կարգուկանոնի հանդեպ[9]:

Չնայած թանզիմաթի բարեկարգումների մակերեսայնությանը, անհետևողականությանն ու ամբողջովին վերցրած՝ կիսատ-պռատ բնույթին, այն, իրոք, մի որոշ չափով նպաստեց, մանավանդ, կայսրության խոշոր քաղաքների ազգաբնակչության տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացմանը: 1830–1860-ական թվականներին մի քանի անգամ աճեց ներմուծումը Զմյուռնիայով, որի շնորհիվ այդ նավահանգիստը դառնում էր եվրոպական արտահանման ամենատարողունակ հանգույցը: Դրան մեծապես նպաստեց Էգեյանի առափնյա շրջաններում երկաթուղու շահագործումը: Թանզիմաթի ժամանակաշրջանում թողարկվեցին Զմյուռնիա-Այդընը, Զմյուռնիա-Կասաբա, Զմյուռնիա-Ալաշեհիր երկաթուղային ցանցերը՝ իրենց ճյուղավորումներով: Մասնավորապես, Զմյուռնիա-Կասաբա երկաթուղին ընդգրկում էր Մանիսայի շրջանը, որն իր հերթին, ղարկ տվեց տեղի հայ և այլազգի առևտրականության տնտեսական գործունեության ծավալմանը գյուղատնտեսական արտադրանքի (այդեղործություն, բամբակագործություն) արտահանման բնագավառում: Զմյուռնիայի հայ վաճառականությունը 1830–1860-ական թվականներին Եվրոպա էր արտահանում բամբակ, բուրդ, չոր մրգեր, կաշի, ձիթապտուղ, ձուկ և այլ ապրանքներ: 1834 թ. Զմյուռնիայի արտահանումը հասնում էր 112 մլն թուրքական պիաստրի, իսկ 1850 թ. կազմում էր 100-120 մլն. ֆրանկ, և այս ցուցանիշը պետք է կրկնապատկվեր հաջորդ տասնամյակներին[10]: Արտահանման գործընթացին ակտիվորեն մասնակցելուց բացի, զմյուռնահայ դրամատերերը որոշ, շատ ավելի քիչ չափերով, ներդրումներ էին անում նաև արտադրության ոլորտում: 1840–60-ական թվականներին այստեղ գործում էր հայերի կտավի գործարանը՝ 400 աշխատատեղով, ինչպես և «հասարակ անոթների» ապակեգործական ապրանքների գործարան[11]: Կտավի գործարանը, ի դեպ, գործել է 1790 թ. սկսած և գագարեցրել իր գործունեությունը Զմյուռնիա-Կասաբա երկաթուղու շինարարության պատճառով[12]: Ինչ վերաբերում է «թղթարանին», այն Զմյուռնիայում կառուցել էր Հակոբ Չելեպի Տյուզյանը. գործարանն ուներ 180 բանվոր և 1847 թվականին արտադրում էր տարեկան 500000 օխա թուղթ[13]:

Թանզիմաթի դարաշրջանում ևս զմյուռնահայ վաճառականությունը պահպանում էր իր ավանդական կապերը եվրոպական արդյունաբերական կենտրոնների հետ, հիմնավորվելով Տրիեստում, Մանչեստրում և Վիեննայում: Դեռևս XIX դ. սկզբին Տրիեստում հայտնի էր Ապրոյան Աբրահամի ազգականի վաճառատունը, որն իրացնում էր Օսմանյան Թուրքիայից բե-

---

9 Նույն տեղում, 1843, № 164:

10 Ю. А. Петросян, А. Р. Юсупов. Измир. М., 1973, с. 21, 25.

11 Ն. Մարգիսյան, Տեղագրություն ի Փոքր և ի Մեծ Հայս. Վենետիկ, 1864, էջ 10:

12 Հ. Ռոսյան. Հայք ի Զմյուռնիա. հ. Ա, Վիեննա, 1899, էջ 34–35:

13 «Եվրոպա», 1849, № 2: Օխա ծանրության միավոր. Օսմանյան կայսրությունում, իր չափերի տատանումներով հանդերձ, Կոստանդնուպոլսում կազմել է մոտ 1 կգ. 282 գ. (տե՛ս. Книга законов султана Селима I. Публ. текста, перевод, терминолог. коммент. и предисловие А. С. Тверитиновой. М., 1969, с. 76).

բած գյուղատնտեսական ապրանքներ[14]: Տրիեստում էին գործառում Պետրոս Յուսուֆյանը՝ Եգիպտոսի նշանավոր քաղաքական գործիչ Պողոս Յուսուֆյանի եղբայրը, արենակցական կապերի ընձեռած բոլոր հնարավորություններով հանգերձ, Ստ. Ապրոյանը, որը նույնպես Եվրոպա էր արտահանում ոչ միայն Զմյուռնիայի շրջակայքի, այլև եգիպտական գյուղատնտեսական ապրանքներ, Գր. Աբելյան-Գուլասպյանը և ուրիշներ[15]:

Անգլիական թեթև արդյունաբերության ապրանքները Օսմանյան Թուրքիայում իրացնող զմյուռնահայ վաճառականները հայտնի էին դեռևս 1838 թվականից, երբ Մանչեստրում հիմնվեց Գաբամաճյան եղբայրների վաճառատունը: Այնուհետև, այստեղ հաստատվեցին Սպարթալյան, «Պ. Պապո և ընկերք» առևտրական տները[16]: Հետագա տասնամյակներին Մանչեստրում են հաստատվել զմյուռնահայ վաճառականներ Հ. Հովակիմյանը, Գարամաճյանները, Կ. Աղջիկյանը, Հ. Կոստանդյանը, Կ. Էքիզյանը, Ե. Եսայանը, Օ. Շահումյանը, Խ. Վարպետյանը և ուրիշներ[17]: Մանչեստրում, և առհասարակ, Եվրոպայում դործող հայ վաճառականների ջանքերն ու կապիտալները միավորելու փորձ արեց Հ. Հովակիմյանը՝ համախոհների հետ կազմակերպելով «Արարատյան» ընկերությունը[18], որը դործել է կարճ ժամանակ:

Թանզիմաթի ժամանակաշրջանում զմյուռնաբնակ և շրջակայքի հայ վաճառականների մի այլ խումբ՝ շատ ավելի ստվարաթիվ, ներմուծում էր սուրճ, շաքար, ձեթ, լեզակ, մեղրամոմ, թեթև արդյունաբերական այլ ապրանքներ և արտահանում մետաքս, բուրդ, ափիոն, դեղորայք, գխտոր, սաթ և այլն: Առավել նյութական միջոցներ ունեցողները ներգրավված էին թանկագին քարերի՝ մարգարտի, ադամանդների, ոսկերչական այլ ապրանքների առևտրում[19]: Այս առևտուրը հենվում էր, մի որոշակի իմաստով, էսնաֆությունների տնայնագործական արտադրանքի վրա և այստեղ պետք է ասել, որ հայ համապատասխան գրականության մեջ հատուկենտ տեղեկություններ են պահպանվել Զմյուռնիայի առևտրաարհեստավորական էսնաֆությունների մասին: Առևտրական կորպորատիվ միությունները բավականաչափ ակտիվ էին նաև XIX դ. սկզբներին: Տ. Սավալանը հիշում է այս ժամանակաշրջանի մեծահամբավ մի վաճառականի, որը «ասուեղինի վաճառականաց արուեստապետն էր»[20]: Պետք է մակաբերել, որ նույնատեսակ ապրանքների վաճառականները, ինչպես և արտադրողները, միավորված էին միևնույն կորպորատիվ միությունների մեջ: Թանզիմաթի ժամանակաշրջանում և գրանից տասնամյակներ հետո իրենց կենսունակությունն էին պահպանել արհեստավորական էսնաֆությունները՝ հացագործների, երկաթագործների, կտավագործների, մետաքսագործների, մաշակարների և այլն: Որևէ էսնաֆին վերաբերող գործերը, հումքի, ար-

---

14 «Արշալույս արարատյան», 1857, № 558:

15 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթ. 129, վավ. 95:

16 «Արշալույս արարատյան», 1859, № 601:

17 Մ ո ւ շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. Մանչեստրի հայ գաղութը. Բոստոն, 1911, էջ 29–30: «Արշալույս արարատյան», 1863, № 700, № 1867, № 807:

18 Մ ո ւ շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 16–17:

19 Ղ. Ա լ ի շ ա ն. Քաղաքական աշխարհագրություն. Վենետիկ, 1853, էջ 545:

20 Տ. Ս ա վ ա լ ա ն. Կենսագրական հուշեր. Կահիրե, 1900, էջ 15:

սադրանքի, դրա որակի, գների և այլնի վերաբերյալ որոշումները այստեղ կայացնում էին էսնաֆի մեծ ժողովում (մեջլիս-ի քեբիր): Դժվար է ասել, արդյո՞ք այդ ժողովը միավորում էր արտամիլեթային (մահմեդական և ոչ մահմեդական միլեթների) էսնաֆի ներկայացուցիչներին՝ միևնույն կամ հարակից առևտրաարհեստավորական զբաղմունքների մեջ ընդգրկված մարդկանց, թե ոչ:

Մանչեստրում զմյուռնահայ առևտրականների գործունեությունը մեկուսի երևույթ չէր: Այն արդյունավետ էր դառնում Զմյուռնիայի նավահանգստում անգլիական ապրանքների արտահանման ակտիվացմամբ (որը Օսմանյան Թուրքիայում անգլիական ակտիվ քաղաքականության հետևանքն էր): 1856 թ. Զմյուռնիայի նավա-հանգստում ներմուծման ընդհանուր գումարի մեջ Անգլիային բաժին էր ընկնում ամենաշատը եվրոպական երկրների մեջ՝ 61 մլն 207 հազար ֆրանկ, Ավստրիային՝ 23 մլն, Ֆրանսիային՝ 21 մլն 500 հազար ֆրանկ[21]: Մանչեստրում զմյուռնահայ առևտրականության գործառույթը՝ ոչ միայն անգլիական ապրանքների իրացումը Օսմանյան Թուրքիայում, այլև վերջինիս գյուղատնտեսական ապրանքների վաճառքը Անգլիայում, թեկուզ և արտահանման փոքր ծավալներով, վկայում է վաճառականության ոչ միայն միջնորդի դերը, այլև ակտիվությունը արտահանման-ներմուծման գործընթացում:

Մինչև 1860 թ. սահմանագրությունը (Զմյուռնիայում այն կիրառվել է 1861թ. փետրվարից) զմյուռնահայ համայնքը օսմանյան պետության մեջ միլեթների համակարգի շրջանակներում ունեցել է ազգային վարչություն, որը կառավարել է ազգային հաստատությունները և կազմակերպել կրթական գործը: Այստեղ ևս, ինչպես Կոստանդնուպոլսում և հայաբնակ մյուս վայրերում, ազգային վարչության գլուխ էր կանգնած առաջնորդը, որը համայնքի կողմից ընտրված հոգաբարձուների հետ միասին կազմակերպում էր հարկեր հավաքելու, համայնքի եկամուտները պահպանելու և իրացնելու, ազգային հաստատությունների խնամքի և ֆինանսավորման գործը: Զմյուռնիայում շատ ինքնատիպ էր ազգային եկամուտները (որ ստացվում էին ս. Ստեփանոս և ս. Լուսավորիչ եկեղեցիներին պատկանող անշարժ գույքից, նվիրատվություններից, կտակներից և այլն) և դրանց առնչվող իրավական փաստաթղթերը պահելու ձևը: Դրանք պահվում էին «խօրա ըսուած սնտուկում», որի հինգ բանալիները գտնվում էին համայնքի հինգ երևելի անձանց մոտ. առաջնորդի[22], եկեղեցիների ավագերեցի, գանձապետի (գապզիմալ), իսկ մյուս երկուսը՝ պարզապես հեղինակավոր

---

21 «Արշալույս արարատյան», 1857, 26 հոկտեմբերի:

22 Մինչև 1826 թ. Զմյուռնիայի առաջնորդները (միաժամանակ կատարում էին Նվիրակի պաշտոն) նշանակվում էին էջմիածնի կաթողիկոսների կողմից և Զմյուռնիան համարվում էր, կարծում ենք՝ XV դարից, էջմիածնի «տէրունի» թեմը: Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում բավական ընդարձակ, բայց և ոչ սպառիչ, թվարկվում են այդ թեմի մեջ մտնող հայաբնակ բնակավայրերը (Դիվան հայոց պատմության. հ. 3, Թիֆլիս, 1912, էջ 798): Վավերագրերում վկայված հնագույն առաջնորդը Պռնկտոշ Կարապետն է 1610-ական թվականներին, որին Գրիգոր Կեսարացին հիշում է իբրև «Թիրայու և Իզմիրու և Մանիսայու առաջնորդ» (Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն. Թորոս Աղբար. հ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ 281): 1826 թ. Զմյուռնիան անցել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հոգևոր իրավասության ներքո, սակայն թեմը և ժողովուրդը միշտ էլ առանձնահատուկ կապեր են ունեցել էջմիածնի հետ:

և արժանահավատ երկու անձանց մոտ: Խորան բացվում էր այս բոլոր հինգ անձանց ներկայությամբ[23]:

Ճիշտ չէ այն կարծիքը, թե մինչև 1861 թ. համայնքի վարչությունը չի ունեցել մյութեվելիական կարգ և դրանով իսկ, իբր, տարբերվել է Կ. Պոլսի հայ համայնքի վարչությունից: Խնդիրն այն է, որ Օսմանյան Թուրքիայում կրոնական և բարեգործական նպատակներով հատկացված գույքը, խոշոր գումարներն ու նվիրատվություններն չէին տնօրինվում այլ կերպ, քան վակֆային համակարգի միջոցով: Դա փոխադարձաբար ձեռնտու էր և՛ կրոնական հաստատությանն ու պետությանը, և՛ նվիրատուին (կտակարարին), որովհետև վակֆ արված արժեքը չէր հարկվում և նվիրատուն կարող էր տնօրինել դրա մի մասը և ժառանգություն թողնել: 1832 թ. Զմյուռնիայի առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսը Երուսաղեմի պատրիարքին գրված մի նամակում տեղի վարժարանի մասին տեղեկություններ հայտնելիս ավելացնում է. «Ըստ կարի իմումն աշխատեալ կարգադրեցաք այսչափ բարէջան միւթէվէլօք և իշխանօք քաղաքիս»[24]: Վակֆային գույքի եկամուտները վերահսկում էին հենց այս մյութեվելիները, որոնք նաև «գործակալ» են հորջորջվում Զմյուռնահայ համայնքին վերաբերող վավերագրերում: Ս. Ստեփանոս եկեղեցին, ինչպես և ս. Լուսավորիչը տնօրինում էին անշարժ գույք խանութներ, տներ, այգիներ, պահեստներ և այլն, որոնց եկամուտների և կառավարման հարցերով զբաղվում էին հատուկ գործակալ-մյութեվելիները: 1820-ական թվականներին ս. Ստեփանոս եկեղեցու ամենաեկամտաբեր կալվածքներից մեկի՝ Ֆրենկխանեի մյութեվելիությունը վարում էր մեծահարուստ Գրիգոր Պապոյանը, որի մահվանից հետո մյութեվելի է կարգվել Աստվածատուր Ապրոյանը[25]: Նույն կերպ, ազգային վարչության մեջ ընտրվում էին «տարեկան իշխաններ» հոգաբարձուներ, մեկ տարվա լիազորությամբ[26]: 1847 թ. մի վավերագրում ստորագրել են չորս հոգաբարձու և նրանց գործակիցները, որոնց թիվն արդեն հասնում է մեկ տասնյակի[27], իսկ նույն թվականի մի այլ վավերագրում հիմնավորվում է ազգային վարչության կազմն ընդլայնելու անհրաժեշտությունը. «ծանրութիւն գործոյս պատճառս ետ զայլ ևս տասն անձինս ազգովին գործակիցս որոշել չորից տարեկան հոգաբարձուաց»[28]: Պատճառը ոչ միայն 1845 թ. աղետալի հրդեհի հետևանքների վերացման գժվա-

23 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 448: Ա. Ա յ վ ա զ - յ ա ն. Հոնիական հայ գաղութի նահապետներեն.– «Արևելք», 1900, № 4409:

24 Մատենադարան. Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1474:

25 Ա. Ա յ վ ա զ յ ա ն. Նշվ. աշխ.:

26 «Տարեկան իշխանները» նույն մյութեվելիները, Զմյուռնիայում գործում էին թանզիմաթից դեռ շատ առաջ: 1833 թ. մարտի 14-ի թվակիր մի վավերագրում ուղղված Էջմիածնի կաթողիկոսին, կա տարեկան երեք իշխանների ստորագրություն (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 78, վավ. 142 ա): Ուշագրավ է, որ արդեն թանզիմաթի ժամանակաշրջանում, 1841 թ., Զմյուռնիայի շուրջի (քաղաքային ներկայացուցիչների ժողով) վերաբերյալ ֆերմանով այդ ժողովի անդամները միայն մեկ տարով պետք է վարեին իրենց պաշտոնը («Արշալույս արարատյան», 1841, № 53): Զմյուռնահայերի տարեկան իշխանների թիվը 1830-ական թվականներին (հավանաբար՝ դրանից էլ առաջ) հասնում էր չորսի:

27 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 129, վավ. 207:

28 Նույն տեղում, թղթ. 130, վավ. 335:

ությունները էին, այլև համայնքի վարչությունն աղատականացնելու տրամադրությունները, որոնք պայմանավորված էին թանզիմաթով:

Առանձին հոգաբարձուներ էին ընտրվում վարժարանների գործերը վարելու համար («մասնավոր ժողով»): Նշանակվում էր նաև Էջմիածնի վակֆների հատուկ վերակացու: Երբ Զմյուռնիան անցավ Կ. Պոլսի պատրիարքության իրավասության ներքո, մինչև 1852 թ. խզված մնացին Մայր Աթոռի և հայ համայնքի դարավոր հարաբերությունները: Ներսես կաթողիկոսի ժամանակ դրանք վերականգնվեցին, հասկանալի է, ոչ երբեմնի նվիրապետական հիմունքներով, այլ վակֆային-սեփականատիրական շրջանակներում: Զմյուռնիայում Էջմիածնի կալվածքների կառավարիչ նշանակվեց Թ. Զելիկը: Կաթողիկոսին գրած նրա մի հաշվետվության մեջ հիշվում են Էջմիածնի անշարժ կալվածքները՝ այգիներ, տներ և այլն[29]:

Ազգային վարչության մեջ ընտրվում էին նաև ս. Ստեփանոս եկեղեցու տեսուչ, հիվանդանոցի հոգաբարձու և համայնքի կողմից համաքաղաքային շուրայի մեջլիսի ներկայացուցիչ[30]: Վարչական այս կառուցվածքը փաստորեն պահպանվել է մինչև 1860 թ. արևմտահայերի ազգային սահմանադրությունը՝ ժամանակի ընթացքում կրելով մասնակի փոփոխություններ:

Ազգային վարչությանը հիմնականում անդամակցել են հարուստ վաճառականներ, ինչպես և միջին խավերի՝ առևտրաարհեստավորական կորպորացիաների գլխավորներ: Դասային ներկայացուցչության գրեթե նույն մոդելը գործում էր Կ. Պոլսի հայ համայնքում: 1844 թ. պատրիարքի գլխավորությամբ այստեղ ստեղծվել էր «երեսնից ժողով», որի կազմի մեջ էին մտել ոչ միայն ամիրաներ ու դրամատերեր, այլև Էսնաֆի ներկայացուցիչները[31]: Եվ մեկ, և մյուս դեպքերում ազգային վարչության կազմի ընդլայնումը կրում էր թանզիմաթի բարեկարգումների կնիքը, որ ի հայտ էր գալիս առևտրաարհեստավորական խավերի ներկայացուցչությամբ[32]:

Հիրավի, 1850 թ. էլ ավելի ներկայացուցչական դարձավ զմյուռնահայ համայնքի վարչությունը. ընտրվեց 40 մարդուց բաղկացած հոգաբարձություն, որոնք 8-ական անդամներով բաժանվեցին հինգ խմբերի և խմբերից յուրաքանչյուրն իր պաշտոնը պետք է վարեր մեկական տարի, մինչև 1854 թ.[33]: Այսպիսով, ազգային վարչությունը վարելու էին ոչ միայն սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչները, այլև այդ տարբերությունը ներկայացնելու էին հերթագայող, ոչ միևնույն անձինք: Այստեղ, պետք է ավելացնել, որ Զմյուռնիայում ամիրաներ չեն եղել, ինչի հակառակն են պնդում Հ. Քոսյանը և նրա հետևությամբ, այլ հեղինակ-

---

29 Նույն տեղում, թղթ. 167, վավ. 448:

30 «Արշալույս արարատյան», 1847, № 281:

31 Ա. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը. հ. 1, Երևան, 1955, էջ 345:

32 Էսնաֆի ներկայացուցչության ընդլայնումը ամենևին չէր կարող մեղմել սոցիալական հակասությունները, որոնք ի հայտ էին գալիս նաև դրավոր բողոքների ձևով: 1841 թ. աշնանը զմյուռնահայ երևելիների դեմ տարածվել էին «անարժան ու անճոռնի ոտանավորներ», որոնք, «Արշալույս արարատյանի» կարծիքով, հետամտում էին «ազգերնիս նախատելու ու միամիտ հասարակության միտքը պղտորելու նպատակը» («Արշալույս արարատյան», 1841, № 60):

33 «Արշալույս արարատյան», 1850, № 355:

ներ: Հ. Քոսյանը կարծում է, թե մինչև 1860 թ. սահմանադրությունը զմյուռնահայ համայնքը կառավարվում էր «ամիրաներու իշխանության ներքև՝»: Բայց ամիրայությունը և ամիրաները զուտ պոլսահայ երևույթ էին, այս տիտղոսը կրող մարդիկ իրենց յուրահատուկ սոցիալական կարգավիճակով, օսմանյան իշխանությունների կողմից նույնիսկ ժառանգականորեն ճանաչված լինելով (ոչ իրավականորեն, այլ սովորույթի ուժով՝ որոշակի պաշտոններ միմյանց փոխանցելու իրողությամբ) հանգերձ, հրապարակ են իջել Կ. Պոլսում՝ 1750-ականի սկզբներից: Բոլորովին այլ հարց է արդեն, որ ամիրաները գործել են նաև գավառներում, իբրև փաշաների սեղանավորներ, հարկահավաքման գործի կազմակերպիչներ, շինարարճարտարապետներ և այլն: Միայն պոլսահայ համայնքում էր, որ նրանք ստանում էին իրենց յուրահատուկ դիրքի և տիտղոսի հաստատումը:

Զմյուռնիայում հայ լուսավորչական համայնքից առանձնացած էին հայ կաթոլիկները[35], որոնց կրոնական սպասարկումը 1830 թ. հետո իրականացնում էին լատին կապուչինները: Թանզիմաթի ժամանակաշրջանում նրանք բնակվում էին, բացի Զմյուռնիայից, նաև շրջակա բնակավայրերում և զբաղվում էին առևարով կամ ընդգրկված էին հարկահավաքման համակարգի մեջ (ուշրի վարձակալում)[36]: 1840 թ. ի վեր այս տարածաշրջանում նրանց հոգևոր սպասարկումն իրականացրել են Վիեննայի մխիթարյանները, որոնք այս ժամանակներում հիմնել էին վանատուն (դպրոց)[37]: Առևտրական գործունեության թելադրանքով կամ իլթիզամի համակարգի ոչ արդյունավետության հետ կապված՝ Զմյուռնիայի շրջակայքի հայ կաթոլիկները աստիճանաբար տեղափոխվել են Զմյուռնիա կամ էլ Կ. Պոլիս:

Զմյուռնահայության հնագույն հաստատությունը մնում էր ս. Ստեփանոս եկեղեցին[38], որի հասույթները տրամադրվում էին համայնքի աղ-

---

34 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա. հ. Ա, էջ 106–107:

35 Կաթոլիկները Զմյուռնիա և շրջակայք էին դաղթել դեռևս 1747 թ.՝ Նախիջևանի Ջահուկ գավառից և Նոր Ջուղայից, Թովմաս Իսավերդենցի գլխավորությամբ (Հ. Քոսյան. նշվ. աշխ., էջ 306): «Էգեյանի ափերն հասան ավելի քան հազար մարդ՝ կաթոլիկ պարսկահայերից», ինչպես անվանում էին իրենց այդ դաղթականները, հիմնականում՝ վաճառականներ (այդ դաղթականության մասին տե՛ս Մ.-Ս. Սմիրնելիսի ուշադրավ աշխատությունը) (M.-C. Smyrnelis. Les Armeniens catholiques de Smyrne aux XVIIIe et XIXe et siecles Revue du monde Armenien. T. 2, Paris, 1995–1996).

1748 թ. նրանք դիմել են օսմանյան իշխանություններին՝ Զմյուռնիայում մատուռ շինելու խնդրանքով (Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 407): 1762 թ. Զմյուռնիայում և Թիրագիրում նրանցից մնացել էր 700 մարդ, իսկ մնացածները հեռացել էին Էգեյանի շրջաններից: Հայ կաթոլիկներով Զմյուռնիան համալրվեց 1790-ական թվականներին, որոնք եկել էին Էնկյուրիից: Հետագայում նրանց մի մասը բնակություն էր հաստատել Այդընում և Նագիլիում:

36 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա. հ. Բ, էջ 43:

37 Հ. Քոսյան. Յիսնամեայ յոբելեան հանդէս հաստատութեան վանատան Մխիթարեանց որ յԱյտրն.– «Հանդէս ամսօրեայ», 1903, № 6, էջ 181–183:

38 Ս. Ստեփանոս եկեղեցու ամենավաղ հիշատակությանը հանդիպում ենք 1625 թ. մի ճառընտիրում, որտեղ այն կոչվում է «ս. Ստեփանոս նախավկայ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար 1621–1640). հ. Բ, կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. Երևան, 1978, էջ 187: XVII դ. ս. Ստեփանոսի հետ միասին (և կամ առանձին) հիշվում է նաև ս. Բարդուղիմեոս եկեղեցին, որի անվանը վերջին անգամ հանդիպում ենք 1695 թ. (Մատենադարան, ձեռ. 656, էջ 93 ա):

գային կառույցներին՝ դպրոցներին, ս. Լուսավորչյան հիվանդանոցին, զմյուռնահայության այլ նյութական և հոգևոր կարիքներին: Զմյուռնիայի առաջնորդությունը, որի մեջ մտնում էին Էդեյանի հայաբնակ մյուս տարածքները, 1838–1842 թթ. գլխավորում էր Պ. Թագ-թագյանը, 1842–1845 թթ.՝ Մատթեոս Զուլսաճյանը, որի պատրիարք ընտրվելուց հետո Թագթագյանը վերստին ստանձնեց Զմյուռնիայի առաջնորդությունը մինչև 1863 թ., երբ իր հերթը եկավ պատրիարք ընարվելու: 1863–1872 թթ. Պ. Թագթագյանի առաջնորդության վերջին շրջանն էին Զմյուռնիայում:

1801 թ. ի վեր գործում էր ս. Լուսավորչյան ազգային հիվանդանոցը: 1842 թ. հիմնվում է համանուն եկեղեցի՝ հիվանդանոցի հոգաբարձու Ավ. Էքիզյանի ակտիվ մասնակցությամբ, «քարաշէն, կամարակապ ու գեղատեսիլ»[39]: Հիվանդանոցին կից նույնանուն եկեղեցի կառուցելը նպատակ ուներ հիվանդանոցն ապահովել այդ եկեղեցու հասույթներով: Եկեղեցին և հիվանդանոցը նորոգվել են 1879 թ.՝ Սպարթալյանների ծախքով[40]:

Զմյուռնահայերի պարծաքն էր ս. Մեսրոպյան վարժարանը, որ XVIII դ. վերջին քառորդին հիմնել էին Ապրոյանները[41]: Վարժարանի առաջին տեսուչն է եղել ժամանակի ճանաչված բանաստեղծ և մանկավարժ Հ. Վանանդեցին՝ «Ոսկի դար Հայաստանի» և այլ երկերի հեղինակը: 1831 թ. նրան հաջորդեց Ա. Ռ. Փափազյանը: Պետրոս Յուսուֆյանի նվիրատվության շնորհիվ՝ 1830-ական թվականներին նա վարժարանում մտցրեց ֆրանսերենի և անգլերենի ուսուցում: Լինելով իր ժամանակի կրթված և լայնախոհ մտավորականներից մեկը, Ա. Փափազյանը ս. Մեսրոպյանի սաների ուժերով կազմակերպել է դպրոցական թատրոն, ինչպես և տպարան, որտեղ տպագրվել են այդ դպրոցի աշակերտների ստեղծագործությունները: 1856 թ. Ա. Փափազյանը թողեց վարժարանի տեսչությունը՝ համայնքի դպրոցների ծրագրի և դասացանկի, ինչպես և կրթական բովանդակության շուրջ զմյուռնահայ պահպանողականության հարուցած սուր վեճերի պայմաններում: Ուշագրավ է, որ այդ դպրոցների վարչությունը կախում չի ունեցել առաջնորդարանից՝ ի տարբերություն առհասարակ ժամանակի

---

39 Ա տ ո մ, Իզմիրի ս. Լուսավորչյան հիվանդանոցը և իր տեղեկագրերը.– «Արևելք», Կ. Պոլիս, 1902, № 4965:

40 Հ. Ք ո ս յ ա ն. Հայք ի Զմյուռնիա. Հ. Ա, էջ 172–173: Դարասկզբին Զմյուռնիայում հիվանդանոցներից 4-ը պատկանում էր եվրոպացիներին, մեկական հույներին և հայերին: Քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 130 հազար մարդ, այդ թվում 55 հազար հույն, 45 հազար մահմեդական, 13 հազար հրեա, 12 հազար եվրոպացի և 5 հազար հայ («Բազմավեպ», 1847, № 2, էջ 28):

41 Հ. Ք ո ս յ ա ն. Հայք ի Զմյուռնիա. Հ. Ա, էջ 124: Վարժարանը ս. Մեսրոպյան է կոչվել հիմնվելուց շատ հետո, 1836 թ. ոչ շուտ: 1834 թ. կառուցվել է նրա նոր շենքը, ընդունվել ուսումնական նոր ծրագիր: Ներսես Աշտարակեցուն գրած իր նամակին (15 մայիսի, 1834 թ.) Ա. Փափազյանը կցել է վարժարանի ծրագիրը, որտեղ այն պարզապես կոչվում է «ուսումնարան հայոց» (Մատենադարան, Մերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1479): Նույնին ուղղված՝ 1835 թ. մարտի 20-ի թվակիր նամակում Ա. Փափազյանը այդ հաստատությունը կոչում է «վարժարան», «ուսումնարան» և «դպրոց» դարձյալ առանց որևէ անվան (նույն տեղում, թղթ. 206, վավ. 1482): 1836 թ. տպագիր մի ազդում, առաջին անգամ նշվում է դպրոցի անունը՝ «Հանդէս տարեկան հարցաքննութեան ուսմանց աշակերտացն Մեսրովպեան դպրատան: Ի Զմիւռին, յաւուր կիւրակէի ի 19 յունուարի, 1836» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 89, վավ. 252):

այլ հայկական դպրոցների: Այն տնօրինել են աշխարհական հոգաբարձուները՝ թանզիմաթից էլ առաջ[42]:

Ս. Մեսրոպյանը հռչակված էր Զմյուռնիայի սահմաններից շատ հեռու. այստեղ ուսանելու էին գալիս բազմաթիվ աշակերտներ՝ Կ. Պոլսից և հայաբնակ այլ վայրերից: Համազգային որակների այդ դպրոցի մասին էր «Արարատում» գրում Գ. Պատկանյանը՝ այն համարելով Նոր Աթենք բոլոր հայերի համար[43]: Այստեղ են սովորել XIX դ. երկրորդ կեսի այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են Ատ. Ոսկանյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Նուպարյանը, Գր. Մսերյանը և շատ ուրիշներ, որոնք զարգացման բարձր աստիճանի հասցրեցին հայ մամուլը, հրապարակախոսությունը, գեղարվեստական գրականությունը և մանկավարժական միտքը:

1820 թ. հետո, Հ. Քոսյանի կարծիքով՝ 1830–1835 թթ. է հիմնվել Զմյուռնիայի իգական ս. Հռիփսիմյան վարժարանը[44]: Կարելի է, սակայն, կարծել, որ վարժարանը գործել է 1820-ական թվականներին, բայց առանձին շենք է ունեցել 1840 թ. կամ դրանից ոչ շատ առաջ: 1841 թ. փետրվարին, տարեկան քննությունների ժամանակ, այդ վարժարանի հոգաբարձու Ղ. Պալդաղարյանը իր ելույթում հայտնում է. «Ահա դեղեցիկ ու ընդարձակ դպրատուն մը հատուկ ձեզի համար շինուեցաւ»[45]:

Շենքը կառուցել էր վիեննաբնակ վաճառական Հ. Սարգսյանը: 1845 թ. հրդեհին այն այրվեց և վերստին կառուցվեց 1849 թ., կրկնահարկ և ավելի ընդարձակ տիկ. Հռ. Կոստանդյանի ծախքով, վերանվանվելով ս. Հռիփսիմյան վարժարանի: 1840–1850-ական թվականներին զմյուռնահայերի դպրոցները միավորված էին միևնույն տեսչության ներքո և այս դրությունը պահպանվեց մինչև դարավերջ: Թանզիմաթի տարիներին ս. Մեսրոպյանն ունեցել է 250–300 աշակերտ, ս. Հռիփսիմյանն ավելի պակաս՝ 150–300:

Ս. Մեսրոպյանի շենքը անվթար մնաց 1845 թ. հրդեհի ժամանակ. «Արշալույս արարատյանը» 1847 թ. դրում էր, որ այդ վարժարանի շենքը չի այրվել[46], մինչդեռ իգական դպրոցի աշակերտուհիները հաճախում էին «Քորք ողորմութեան ըսուած հռոմեական միաբանության դպրոցը»[47]:

Քաղաքում գործում էին նաև այլ ազգային դպրոցներ, ինչպես Ռեֆորցոյի ֆրանսիական դպրոցը՝ լեզուների և բնագիտական առարկաների բարձրորակ ուսուցմամբ, հունական ոչ ազգային դպրոցը՝ լեզվական և

---

42 Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1477, 1481, 1482:

43 «Արարատ», 1850, № 13:

44 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա. հ. Ա, էջ 137:

45 «Արշալույս արարատյան», 1841, № 22:

46 Նույն տեղում, 1847, № 289: Հակառակ դրան, ս. Մեսրոպյանի վարժապետ Հ. Շահինյանը Ներսես կաթողիկոսին ուղղված՝ 1849 թ. նոյեմբերի 3-ի նամակում գրում է, թե չորս տարի է, ինչ ս. Մեսրոպյանի շենքը վերածվել է ավերակի՝ «որ ի բաղմավտանգ հրդեհէ անտի ցարդ ահիւնացեալ մնայ...» (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 149, վավ. 750): Վարժապետը իրողությունը թանձր գույներով է ներկայացրել, հավանաբար, կաթողիկոսի ուշադրությունը նյութական անձկության մեջ ընկած ս. Մեսրոպյանի վրա սևեռելու նպատակով:

47 «Արշալույս արարատյան», 1847, № 286:

առևտրադիտության թեքումով, կաթոլիկների դպրոցը՝ խուլուհամրերի համար և այլն[48]:

1850 թ. Զմյուռնիայում բացվեց հայկական երկրորդ արական դպրոցը՝ Աղաբեկյան վարժարանը, որի տեսուչներն էին հետագայի հանրահայտ մտավորական գործիչներ Մ. Աղաբեկյանը և Մ. Մամուրյանը: Կարճ ժամանակ անց, կառուցվեց վարժարանի ընդարձակ շենք և ձեռնարկվեց երկսեռ ուսուցում, որ նորույթ էր արևմտահայ իրականության մեջ: Եվրոպական մանկավարժական սկզբունքների կիրառումն էր այս դպրոցում, որ պետք է պատճառ գառնար պահպանողական ուժերի դիմադրությանը: Համենայն դեպս, դպրոցը չի հիշվում 1852 թ. հետո, որ վկայում է դրա կարճատև գոյության մասին[49]: Զմյուռնիայում մասնավոր դպրոց էր բացել նաև Տ. Սավալանյանը, դարձյալ 1850-ական թվականներին, որն ուներ մոտ 40 աշակերտ[50]: Այս դպրոցը ևս աչքի չի ընկել իր երկարակեցությամբ և որևէ հետք չի թողել զմյուռնահայ դպրոցի պատմության մեջ:

Թանզիմաթի շրջանում Էդեյանի տարածաշրջանի հայության լուսավորական-կրթական կյանքին, անշուշտ, նպաստեց 1856 թ. հաթթով համայնքներում հանրակրթական դպրոցներ բանալու թույլավությունը[51], թեև պետք է ասել, որ դեռևս Թանզիմաթից շատ առաջ գավառական բնակավայրերում հայերն ունեին իրենց դպրոցները: Այսպես, 1832 թ. Էյդեմիշում կառուցվել էր տեղի դպրոցը՝ Օ. Զուլֆայանի ծախքով[52]: Թանզիմաթից առաջ է հիմնվել Մանիսայի ս. Լուսավորչական երկսեռ դպրոցը (Վարի թաղում. կար նաև Վերի թաղ): Մանիսայում «Ազգասեր» ընկերության նպատակներից մեկը հենց տեղի դպրոցների «բարեկարգությանց» հոգ տանելն էր:

Ազգային դպրոցները թվաշատ դարձան 40-ական թվականներին: Փաստերը ցույց են տալիս, որ Էդեյանի շրջանի հայերը, անկախ իրենց թվաքանակից, չնչին իսկ հնարավորությունն օգտագործում էին իրենց զավակներին ուսման տալու համար: Այսպես, Սյոքեի հայերը, որոնց քանակը 1870-ական թվականներին չէր անցնում 15 տնից, առանց ուսման չեն մնացել, հաճախել են տեղի հույների դպրոց, իսկ նույն ժամանակներում Դուշատայի 29 տուն և Բայանդրրի 40 տուն կազմող հայերն ունեին իրենց սեփական դպրոցները[53]:

Էդեյանի առափնյա գաղթավայրերի հանրային կյանքում շատ կարևոր գեր են ունեցել կրթական-բարեսիրական և մշակութային ընկերությունները:

Զմյուռնահայերի առաջին ընկերությունը ունեցել է բարեգործական բնույթ և կազմակերպվել է 1841 թ. օգոստոսից առաջ, հրդեհից տուժած աղգակիցներին աջակցելու նպատակով. այն դրամ և հագուստեղեն էր

48 Նույն տեղում, 1845, № 242, 1842, № 58, 1848, № 305:
49 Նույն տեղում, 1852, № 421:
50 Տ. Ս ա վ ա լ ա ն. Նշվ. աշխ., էջ 38–39, 88:
51 Ա. Փ ա փ ա զ յ ա ն. Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թվականներ). Երևան, 2002, էջ 31: И. Л. Ф а д е е в а. Նշվ. աշխ., էջ 64:
52 Տ. Ս ա վ ա լ ա ն. Նշվ. աշխ., էջ 99:
53 «Արևելյան մամուլ», 1879, № 3, էջ 437-439:

հայթայթում «բազմաթիվ խեղճերու համար»[54]: Թե որքան ժամանակ գործեց այդ ընկերությունը և ովքեր էին դրա անդամները, հայտնի չէ:

Զմյուռնիայում և շրջակայքում իր գործունեության լայն շառավիղներով և նյութական հնարավորություններով անգերազանցելի մնաց նույն ժամանակներում հիմնված «Սյունյաց» ընկերությունը (1841–1850-ական թվականների սկիզբ): Ընկերությունը հիմնվել էր զմյուռնահայ մտավորականության նախաձեռնությամբ, որին նախապես նպաստեցին Տրիեստի վաճառականները: Կարճ ժամանակ անց, ընկերությանն անդամակցեցին երևելի դրամատերերը. Տրիեստից՝ Պ. Յուսուֆյանը, Ա. Ապրոյանը և Գր. Աբելյանը, Հ. Սարդսյանը՝ Վիեննայից, Տատյանները՝ Կ. Պոլսից, ինչպես նաև Բաղդադի, Մադրասի, Բոմբեյի և այլ վայրերի վաճառականները: «Սյունյաց» ընկերությանն իրենց նյութական ու մտավոր մասնակցությունը բերեցին Թիֆլիսի, Շուշիի և այլ քաղաքների կարողության տեր հայեր, այն վերածվեց համազգային կազմակերպության:

Ընկերության նպատակն էր ըստ ամենայնի նպաստել Զմյուռնիայի և շրջակայքի հայերի մեջ կրթության տարածմանը, ս. Մեսրոպյան դպրոցում ձեռնարկել բնագիտական առարկաների ուսուցում: Նրա ջանքերով դպրոցներ հաստատվեցին Էյդեմիշում, Այգընում, Գրգաղաճում, Կասաբայում, Մենեմենում և այլուր: Ընկերությունը դպրոցներ էր բացել նաև Վառնայում (Բուլղարիա) և Դարդանելի շրջանում: Մինչև 1849 թ. ընկերության հոգաբարձուն էր «Արշալույս արարատյան» թերթի խմբագիր Ղ. Պալգազարյանը[55]: Ի դեպ, տրիեստարնակ հայ վաճառականները ընկերության մեջ էին ներգրավել նաև իրենց օտարազգի գործընկերներին, որոնցից էր հույն Սարիտակին, որը զգալի նյութական աջակցություն էր ցուցաբերել «Սյունյացին»[56]: Ռուսաստանից ընկերությանը դրամական առատ նպաստներ էին հատկացրել Լազարյանները, իր աջակցությունը բերեց նաև կաթողիկոս Ներսես Աշտարակեցին:

Սակայն ընկերության գլխին ամպեր էին կուտակվում, գլուխ էր բարձրացրել երկպառակությունը՝ մասնավորապես նրան առնչվող որոշ հոգևորականների մեջ: «Սյունյացի» ատենապետ Գր. Մարկոսյանը 1844 թ. հուլիսի 30-ի իր նամակում խնդրում էր կաթողիկոսին՝ կանգնել ընկերության գլուխ, որպեսզի «անվտանգ մնասցէ ընկերութիւնն մեր ի չարութենէ ոմանց հոգևորականաց մերոց, որք շարժեալ ի վարդապետական փառասիրութենէ և յուսումնատեցութենէ՝ անօգուտ ջանային... տապալել ընկերութիւնն մեր ոչ երկար ժամանակ յառաջ»[57]:

1845-ի հունիսի 21-ի հրդեհը[58] ծանր հարվածներ հասցրեց ոչ միայն «Սյունյաց» ընկերությանը, այլև ամբողջ համայնքին: Այրվել էր քաղաքի

---

54 «Արշալույս արարատյան», 1841, № 49:

55 Նույն տեղում, 1851, № 380:

56 «Բյուզանդիոն», 1905, № 2722:

57 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 110, վավ. 100:

58 Զմյուռնիան հաճախակի է ապրել տարերային աղետներ, հրդեհներ ու համաճարակներ: Հայտնի են մասնավորապես, 1797-ի և 1841-ի կործանարար հրդեհները, որոնք մոխրակույտի էին վերածել քաղաքի ամբողջ թաղամասեր. 1841-ինը տևել էր 17 ժամ և մեծ ավերածություններ գործել հրեաների, մահմեդականների և հույների թաղերում: Հայոց թաղը համեմատաբար թեթև կորուստներ էր կրել: Քաղաքի փայտաշեն տներն ու նեղլիկ փողոց-

մեկ քառորդ մասը, գրեթե ամբողջ Հայոց թաղը՝ ս. Ստեփանոս եկեղեցին, տներ ու խանութներ, «Արշալույս արարատյանի» տպարանը, իգական վարժարանը և այլն: Զմյուռնիայի հայերի 800 տնից անվնաս էր մնացել միայն 40-ը (ամբողջ քաղաքում այրվել էր 3500 տուն, այդ թվում հույների թաղում 1000 տուն)[59]: Նյութական այս աղետից հետո «Սյունյաց» ընկերությունն այլևս ուշքի չեկավ: Այն իր գոյությունն անվանապես պահպանեց ևս մի քանի տարի և դադարեց հաջորդ տասնամյակի սկզբներին[60]:

Շատ ավելի համեստ գործունեություն էր սկսել «Արգածունյաց» ընկերությունը (1843–1845), որ ծրագրել էր թարգմանական երկեր հրատարակել: Դրա տպարանում տպագրվեցին մի քանի գրքեր, ինչպես և զմյուռնահայ երկրորդ թերթը՝ «Հայրենասերը» (1843–1846): Հայտնի է նաև 1844 թ. մայիսին կազմակերպված «Հայկազնյան» ընկերությունը. այն ևս ուներ կրթական ուսումնական նպատակներ, պետք է տպագրեր պատմական ու բարոյախոսական բովանդակության գրքեր: Ընկերության հիմնադիրներն էին Տ. Սավալանյանը, Ա. Տետեյանը, Վ. Սարգսյանը և ուրիշներ: Քիչ տեղեկություններ կան այս ընկերության մասին:

«Սյունյաց» ընկերության դրամատիկ վախճանը սառեցնող տրամադրություններ պետք է ստեղծեր զմյուռնահայ գաղթօջախում. համենայն դեպս, մինչև 1850-ականի վերջն այստեղ որևէ նոր ընկերություն չստեղծվեց: 1859 թ. միայն կազմակերպվեց «Հաշտենից» մշակութային ընկերությունը: Դրա ատենադպիրն էր ընկերություններ կազմակերպելու մեջ փորձառու դարձած Տ. Սավալանը, անդամակցում էին գործիչներ Տ. և Ա. Տեաեյանները, Ղ. Մամուրյանը, Մ. Ս. Վանանդեցին և ուրիշներ[61]: Հաջորդ՝ 1860 թ. ընկերության ուժերով Զմյուռնիայում հրատարակվեց ժողովրդավարական ուղղություն ունեցող «Միություն» հանդեսը:

Զմյուռնահայ տպագրության պատմության նոր շրջանը սկսվում է ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությամբ, նրանք տպագրում էին կրոնական և ուսումնական բնույթի գրքեր: 1839–1854 թթ. այդ տպարանը կոչվում էր Հ. Հալլոքի, ապա Դ. Գրիֆիտի և Ա. Ջերչիլի անունով, այստեղ էր տպագրվում բողոքականների «Շտեմարան պիտանի դիտելյաց» ամսագիրը[62]: Իր նյութերի հետաքրքրությամբ և տպագրական կուլտուրայով մանուկների համար հրատարակվող այս ամսագիրը լույս էր տեսնում հղկված հայերենով, որ, անշուշտ, իր դրական ազդեցությունն է թողել զմյուռնահայ մամուլի գործիչների վրա:

Թանզիմաթի տարիներին՝ 1840-ական թվականներին գործում էին «Արշալույս արարատյանի», Ստ. Պապոյանի և Մեսրոպյան վարժարանի տպարանները: Մեսրոպյանի տպարանը զերծ էր մնացել 1845-ի հրդեհի ավերածությունից: Այստեղ է տպագրվել Ղ. Պալդաղարյանի «Արշալույս ա-

---

ներն ինքնին նպաստում էին կրակի տարածմանն ու տևականությանը («Արշալույս արարատյան», 1841, № 43):

59 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 28ա, թղթ. 121, վավ. 92: Ա վ. Պ ե ր պ ե ր յ ա ն. Պատմություն Հայոց. Կ. Պոլիս, 1871, էջ 313–314

60 «Բյուզանդիոն».1905, № 2706:

61 «Արշալույս արարատյան», 1859, № 601:

62 Գ. Լ ևո ն յ ա ն. Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ. Երևան, 1934, էջ 5:

բարատյանը» իր տպարանն այրվելուց հետո, ինչպես գրում է Ա. Ալպոյաճյանը[63]: Իր երկարակեցությամբ և հրատարակչական կարողություններով 1840-ական թվականներին տպարանների մեջ առանձնանում էր Թաթիկյան վիմագրատունը: Այն տպագրում էր նաև եվրոպական և արևելյան լեզուներով գրքեր, պարբերականներ, հայտարարություններ և այլն: Թաթիկյան տպարանում էր տպագրվում Ստ. Ոսկանյանի ֆրանսերեն «Ռեֆորմ» թերթը՝ 1869 թ. մինչև դարավերջ:

1850-ական թվականներին զմյուռնահայ գրատպության պատմության յուրօրինակ էջերից է «պատանեկան» տպարանների գործունեությունը: Այդպիսի տպարաններում էին տպագրվում, Ա. Փավաղյանի հորդորներով, ս. Մեսրոպյանի սաների խմբագրած «Երկասեր» և «Թութակ Հայկազյան» պարբերականները[64]:

Գրատպության և մշակույթի ասպարեզում անփոխարինելի նշանակություն ունեցավ Տետեյան եղբայրների հրատարակչությունը (1853–1892), որն իր ծաղկումն ապրեց իր հիմնադրի՝ Տ. Հ. Տետեյանի (1832–1868) ժամանակ: Նրա նախաձեռնությամբ ձևավորվեց և արդյունավետ գործունեություն ծավալեց զմյուռնահայ թարգմանիչների փայլուն դպրոցը: Տետեյան հրատարակչության շուրջ համախմբվեցին տաղանդավոր թարգմանիչներ՝ Մ. Մամուրյանը, Գր. Զիլինկիրյանը, Տ. Տետեյանը, Ա. Տետեյանը, Մ. Նուպարյանը, հետագայում՝ Գր. Մսերյանը և ուրիշներ: Նրանք աննախընթաց չափերի ու որակների հասցրեցին ժամանակի հայ թարգմանական գրականությունը՝ այս ասպարեզում առաջ անցնելով նույնիսկ Կ. Պոլսի իրենց ազգակիցներից: Եվրոպական նորագույն սարքավորումներով հագեցած այս ապարանը տպագրեց ոչ միայն ֆրանսիական ու անգլիական հեղինակների թարգմանությունները, այլև շատ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ՝ խթանելով նոր շրջանի հայ գրականության և դպրոցի զարգացումը: Ա. Ալպոյաճյանը Տ. Տետեյանին իրավամբ համարում է «մեծ տպագրապետ և արևմտյան հայոց ամենեն մեծ հրատարակիչ», որի տպագրած 120–130 անուն գրքերը առաջ մղեցին գրական կյանքը[65]:

1840–1850-ական թվականների զմյուռնահայ հասարակական կյանքի և մշակույթի զարգացումը խթանվեց նաև տեղի պարբերական մամուլի գործառույթով: «Արշալույս արարատյան» (1840–1884) և «Հայրենասեր» թերթերը արտացոլում էին ոչ միայն Զմյուռնիայի, այլև առհասարակ ընաշխարհի ու գաղթօջախների հանրային ու մշակութային իրականությունը: Հիմնականում ունենալով ազգային պահպանողական ուղղություն, երկու թերթերն էլ Օսմանյան Թուրքիայում թանզիմաթի բարեփոխումների համոզած կողմնակիցն էին: Հատկապես «Արշալույս արարատյանի» էջերում կարելի է տեսնել ոչ միայն հաթթը չերիֆի, այլև հաթթը հյումայունի բարենորոգումների հակասական ընթացքը Զմյուռնիայի և առհասարակ Էգեյան ծովի առափնյա տարածքներում, օսմանյան պահպանողա-

63 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Զմյուռնիո տպարանները.– «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 77:
64 Նույն տեղում, էջ 80:
65 Նույն տեղում, էջ 81:

կանության կողմից բարենորոգումներին դիմագրելու փաստերի անգրագարձը: Պատահական չէ, որ այս թերթը հետագայում «Նոր օսմանների» ջախջախումը Աբդուլ Համիդի կողմից՝ պետք է դիտեր որպես աղատամտության դեմ սուլթանի հետադեմ քաղաքականության դրսևորում: Ավելացնենք, որ «Արշալույս արարատյանը» հայկական այն գրեթե եզակի թերթերից է, որ իր ընթերցողին ծանոթացրել է «Նոր օսմանների» հրապարակախոսությանը. թերթը թարգմանաբար տպագրեց Նամըք Քեմալի «Աշխատություն» հոդվածը[66], որ նրան հեռաքրքրել է երկրում բարեփոխումներ անցկացնելու տեսակետից:

Վերոհիշյալ գրական շարժումը Տետեյան եղբայրներն ամրապնդեցին իրենց հրատարակած «Արփի արարատյան» ամսագրով (1853–1855), որը հայկական առաջին գրական պարբերականներից մեկն էր: Այստեղ տպագրվեցին թարգմանություններ ֆրանսիական գրականությունից, ինչպես և ինքնուրույն ստեղծագործություններ: Գիտահանրամատչելի գրականության հրատարակության ուշագրավ փորձ էր Գ. Կոստանդյանի «Թանգարան հասարակաց» խորագրով մատենաշարը (16 գրքույկ, 1858): Զմյուռնիացի այս հեղինակն առավել ևս հայտնի է իր «Մեթոտին վրա» երկով, որը խոր կնիք թողեց XIX դարի 2-րդ կեսի հայ իմաստասիրական մտքի պատմության մեջ:

АРМЯНСКАЯ ОБЩИНА СМИРНЫ И ПРЕОБРАЗОВАНИЯ ТАНЗИМАТА
(1840 – 1850-е годы)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Несмотря на поверхностность и непоследовательность реформ танзимата, они в некоторой степени способствовали оживлению экономической и культурной жизни больших городов Османской Турции, в том числе и Смирны. Крупное армянское купечество Смирны в этот период имело торговые связи с Манчестером, Триестом и Веной. Из Турции оно вывозило сельскохозяйственное сырье и ввозило сюда промышленные товары. В армянской общине наиболее многолюдное сословие составляли эснаф-ремесленники и мелкие торговцы. Связанные с эснафом проблемы (качество продукции, ее цена и реализация) обсуждались на большом собрании эснафа, где и принимались решения. В период танзимата община имела национальное управление, национальные учреждения. В это управление входили епархиальный начальник и выборные представители, а в годы танзимата число последних увеличилось за счет представителей эснафа. Демократизация общинного управления в 1840 – 1850 гг. способствовала развитию культурной жизни армян Смирны (школы, книгопечатание, периодическая печать, товарищества и т.д.).

---

66 «Արշալույս արարատյան», 1881, 25 ապրիլի: